Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.71
П-49

19 NOV 2010
27 AUG 2006
891.71
Դ-49
Դ8
Դպ.
891.71-3
Դ-49

ԴԻՄԻՏՐԻԷՎ

ԵՐԱՆ ԱՄԵՆՔԸ ՀԱՆԱԶՈՒՄ ԵՆ

(ՊԱՏՄՈՒԱԾՔ)

Թարգմանեց

ՅԱԿ. ՔԱՀ. ՍԱՌԻԿԵԱՆ

ԹԻՖԼԻՍ
Տպարան «ՀԱՅՐՄԷՍ» ԸՆԿ. 1905 Թ.
Մադաթեան փողոց № 15
(81)

03 APR 2013

10985

Дозволено цензурою. 12 января 1905 г. Тифлисъ.

891.71-3
Ռ-49
912

ՆՐԱՆ ԱՄԵՆԴԸ ԾԸՆՈՂՈՒՄ ԵՆ

(գաւառական բժշկի օրատետրից)

...Իմ ամբուլատորիայում հիւանդների ընդունելութեան ամենատաք ժամանակն էր. յանկարծ նախասենեակում ինչ որ անսովոր շարժում ու անկարգութիւն առաջ եկաւ։ Մէկն ամբողջ ուժով աշխատում էր ընդունարան խցկուել, բայց թոյլ չէին տալիս. ծառաս երկու ձեռքով աշխատում էր դուռը պահել. լսում էին բարկացած բացականչութիւններ—«անպիտան, ո՞ւր ես զօռում. քո հերթը չէ, չէ՞ որ այստեղ հերթով է»... Ես, այն էր, ուզում էի վեր կենալ և վերջ տալ անկարգութեանը, երբ յանկարծ դուռը տեղի տուաւ, ծառաս մի կողմ ընկաւ և ընդունարան մտաւ այլայլած ու զզզուած մազերով մի գիւղացի՝ դէմքը շատ քաշքշելուց կարմրած, ցեխակոլոլ տրեխներով, մտրակը ձեռքին... Անկիւնում դրուած ս. պատկերի առաջ շտապ-շտապ մի քանի անգամ խաչակնքից, որոնող աչքերով դէս ու դէն նայեց ու դէպի ինձ դարձաւ.

—Ձերդ բարեձննդութիւն, ուզում է... ասաց նա յուսահատ ձայնով. ես խոժոռ դէմք ցոյց տուի։

—Եղբայր, այդպէս չի կարելի, յանդիմանո-

բէն ասացի ես, հերթի պիտի սպասել. եթէ ոչ, այդ ինչ անկարգութիւն է—կոտրել հրել, աղմըկել, չէ՞ որ այստեղ մենակ դու չես, գնա նախասենեակ և սպասիր, մինչև քեզ կ'կանչեն։

—Անկարելի է, ձերդ բարեծննդութիւն, աւելի պաղատագին կերպով ասաց նա, որովհետև ուշչում է...

—Ո՞վ է ուշչում...

—Տէր Աստուած, պառաւս, ոմ. Աստուած հեռու պահի թէ ինչպէս է ուշչում. սարի չափ է դառել. շնորհ արա, օգնիր, մի թողնիր...

—Լաւ, կօգնեմ. գնա նախասենեակ ու սպասիր. այ, կընդունեմ միւս հիւանդներին, կնոջդ էլ կնայեմ։

—Բայց նա այստեղ չէ.

—Ինչպէս, հապա ո՞րտեղ է։

—Մատրեոնկա գիւղում, մօր մօտ.

—Առաջուց ասէիր է... ինչ արած, ընդունելութիւնս վերջացնեմ թէ չէ, կըգամ. ասում ես՝ Մատրեոնկայում քե՞զ մօտ է...

—Մատրեոնկայում, ձերդ բարեծննդութիւն, մօր-Մարթայի մօտ է. դու միայն Մարթա Պատանչիկովա ասա, ցոյց կ'տան. նրան ամենքը ճանաչում են։

—Լաւ. լաւ, կը գամ։

—Աստուած քեզ... միտդ պահիր, չմոռանաս, Մարթա. նրան ամենքը ճանաչում են։

Հիւանդներիս արձակեցի, ճաշեցի և զեմոտվային մի զոյգ ձիերով գնացի Մատրեոնկա՝ որոնելու այն Մարթային, որին «ամենքը ճանաչում են»։ Որովհետև, այդ գիւղը շատ աղքատներից էր, ուստի ենթադրելով, որ հիւանդութիւնը ցինգա կլինի, բացի շարժական դեղարկղից հետս թէյ, շաքար, լիմոն և սպիտակ հաց էլ վերցրի։ Մէկ ու կէս ժամայ աշնանային զզուելի ճանապարհորդութիւնից յետոյ վերջապէս մեզ մի կերպ Մատրեոնկա գեղեցիկը և մտանք գիւղի ամենից մեծ փողոցը, որ մօտ 2 վերստ երկարութիւն ունէր։ Նոյեմբերեան կարճ օրը մթնելու վրայ էր. փողոցները դատարկուել էին. միայն մի խրճթի դրան առաջ մի խումբ երեխաներ կային, որոնք ցրտից ձեռքները գրպանները կոխած, կուչ էին եկել։ Մենք նրանց մի կողմը քշեցինք։

—Երեխայք, գոռացի ես, չգիտէ՞ք որտեղ է ապրում Մարթա Պատանչիկովան.

—Մարթա՞ն, հարցրեց նրանցից մէկն, ինչ Մարթա...

Ա՜յ քեզ «ամենքը ճանաչում են», զժգոհելով մտածում էի ես։ Բայց մի աւելի ճարպիկ երեխայ հանեց ինձ մոլորութիւնից...

—Էն է՜... դարձաւ նա դէպի ընկերը, Մարթային չես էլ ճանաչում. Ֆիլիմոնովի այրին է, էլի... յետոյ մեզ դառնալով։ ասաց—դուք նրա տունն անցել էք.

—Մի՞թէ... հապա ո՞րտեղ է ապրում։

Կարիճ տղան առանց մի խօսք ասելու, թռաւ սայլակի վրայ ու կառապանին ասաց.

—Ետ դարձրու, ուղիղ.

Մենք շարժուեցինք. միւս երեխաները նա-

խանձով նայում էին իրենց ընկերոջը, իսկ նա շարունակում էր.

—Ուղիղ, միշտ ուղիղ, այ, այս փոքրիկ փողոցն է. աջ բռնիր, այստեղ փոս կայ, այ, այ, այս քարաշէն տան մօտ է... այստեղ։

Կառավարը ձիանները պահեց. մեր սայլակը կանգնեց մի մեծ, քարաշէն տան դարպասի առաջ։ Այդ տանը կպած մի հին չափար կար, որ մի նեղլիկ անցք ունէր՝ երկար ճիպոտներով հիւսած։ Ես, այն էր, ուզում էի դարպասից ներս մտնել։

—Այդ չէ, այդ չէ, ձայն տուաւ տղան. նրա տան ճանապարհն այդ չէ. այս «սոխաղբից» մըտէք. նա այնտեղ, այն փայտաշէն խրճիթումն է ապրում. թէ ոչ, այս դարպասը նրանը չէ։

Ես մի կերպ ներս մտայ «սոխաղբից», ինչպէս երեխան անուանեց, և առջևս տեսայ առանց ծխնելոյզների մի ողորմելի փայտաշէն տնակ, որ ոչնչով չէր զանազանւում իրեն շրջապատող աղբակոյտից։ Միայն դէպի խրճիթ տանող նեղ կածանն էր, որ ցոյց էր տալիս, թէ դա ոչ թէ աղբակոյտ, այլ մարդկային բնակարան է։ Ես այդ կածանով սրտալի առաջ անցայ և հասայ մի դռան. ճակատս շէմքին խփելուց հազիւ պահելով մի կերպ ներս մտայ և յանկարծ մի մութ ու հոտած փոսի մէջ յայտնուեցայ։

—Ո՞վ է, մթութեան միջից լսուեց մի կանացի ձայն.

—Բժիշկն եմ, եկել եմ այն հիւանդի մօտ, որ ուռչում էր։

—Ա՜խ Տէր Աստուած, ինչպէս էլ մութն է... շարունակեց ձայնը, լուցկին ի՞նչ արի...

Կինն անհանգիստ կերպով լուցկի էր որոնում, իսկ ես կանգնած՝ սիրտ չէի անում շարժուել։ Խանձահոտով լցած խեղդող, ծանր օդը աչքերս ծածկում էր. գլուխս շշմում էր. կեանքումս այդ դրութեան մէջ չէի ընկել։ Վերջապէս լուցկին գտնուեց, և պառաւն իր խղճուկ լապտերը վառեց. նրա աղօտ լոյսը երևան հանեց մերկ ու սևացած պատեր, հողէ յատակ, որ մաքրութեան համար դարմանով էր ծածկւած, և անկիւնում դրած կաւով ծեփած մի փքւած վառարան։ Թըրջւած աչքերս սրբեցի ու չորս կողմս նայեցի. առջևս երեխան գրկին կանգնած էր շուրջ քառասուն տարեկան մի կին։ Առհասարակ այս տարիքի գեղջկուհիներն արդէն պառաւած են լինում. բայց այս կինը բացառութիւն էր կազմում, նրա կլորակ երեսը դեռ պահպանել էր երիտասարդական թարմութիւնը. իրանը բարձր էր և ուղիղ, իսկ վառվռուն սև աչքերում դեռ կրակ կար, որ ապացոյց էր, թէ այդ կինը կուեղուց դեռ չէ յոգնել և ապրել է ուզում...

—Դո՞ւ ես այն Մարթան, որին ամենքը ճանաչում են, հարցրի ես։

—Այո, ես ինքս եմ. ժպիտով պատասխանեց կինը. կարծում էի չես գտնիլ. փեսաս էլ յիմարի մէկն է, մի խելքը գլխին բան բռնել չ'գիտէ. իսկ աղջիկս մեղք է... հետը քաշ եմ գալիս. հիւանդ է, և, դեռ երեխայ էլ ունի. սիրտս այրւում է...

—Բայց ինչո՞ւ է քեզ ժամ, չէ որ նա ամուսին ունի։

—Է՜՝, հայրս, մի՞թէ չգիտես մեր—կանանց դրութիւնը. քանի դեռ առողջ ես, լաւ ես. հէնց հիւանդացար, ընկար թէ չէ, այլևս պէտք չես։ Կինը մի անասուն է, որ չպիտի հիւանդանայ։ Աստուած չանի՝ հիւանդացաս, պրծաւ նրա բանը. ամեն բան պիտի տանի. ոչ ջուր տուող կլինի, ոչ հաւաքող. ամբողջ օրն էլ լսածը յանդիմանութիւն պիտի լինի թէ՝ «ի՞նչ ես խանումի նման պարկել». իսկ ես ցաւում եմ. չէ՞ որ արիւնս է. դրա համար էլ վերցրի ինձ ժամ, այս պալատս։

Ճիշտ որ պալա՞տ... ասացի ես. և ի՞նչպէս է որ դեռ կենդանի ես մնացել այստեղ։

—Հապա ո՞ւր գնայի. դեռ լաւ է, որ սրանից էլ չզրկեցին. այս էլ մեծ բան է. նրա խօսակցութեան ձևն ինձ դուր էր գալիս.—հանգիստ, մի փոքր հէգնօրէն, առանց կանացի ա՛խ ու վի՛շերի։

—Դէ, ցոյց տուր, ո՞ւր է հիւանդդ։

Մարթան՝ մի ձեռքում կրեխան, միւսում ճրագը, ինձ տարաւ վառարանի մօտ, որտեղ ոչխարի քուրքում փաթաթուած ընկած էր մի անշարժ զանգուած։

—Ֆէդոնեա՝ այ Ֆէդոնեա, մրմուռով կանչեց Մարթան, կռանալով դէպի այդ զանգուածը, շարժուիր, անուշս, այ բժիշկն եկել, ուզում է քեզ բժշկել։ Զանգուածը շարժուեց և ոչխարենու տակից դուրս նայեց մի դեղնած և ուռած դէմք, որ կարծես ջրով լցրած լինէր. նա իր մէջ մարդկային հատարեա ոչինչ չունէր։ Աչք, քիթ, բե-

բան... բոլորը մի զզուելի գունդ էր դարձել։ Միայն ծանր շնչառութիւնն էր, որ ցոյց էր տալիս թէ այս հիւծուող մարմնում դեռ կեանք կայ։

—Տեսնո՞ւմ ես ինչ օրուն է, մղկտալով ասաց Մարթան. ոտները, հո՛, կատարեալ գերաններ են. կեանքումս այսպիսի բան չեմ տեսել. կերևի ջրդողութիւն է։ Հիւանդն անտարբեր ընկած էր. կարծես մեռնել, թէ ապրելը նրա համար բոլորովին միևնոյն բաները լինէին։ Մեծ դժուարութեամբ նա ետ քաշեց իր ուռած աչքերը. և այնտեղից վրաս ընկաւ մի ցուրտ հայեացք, որ կենդանութիւնից շատ հեռու էր։

Ես նստեցի նրա մօտ և համաձայն բժշկի պարտականութեան դէմքիս ուրախ արտայայտութիւն տուի։

—Հապա տեսնենք, տեսնենք, այդ ի՞նչ ցաւ է, ասացի ես կրծքագէտը հանելով. դուցէ ոչ մի ցաւ չկայ, այլ հէնց այնպէս՝ մի դատարկ բան է։

Բայց իմ խօսքերս ու անհոգ արտայայտութիւնս ոչ մի կերպ չկենդանացրին հիւանդին. նա անտարբեր ու անորոշ հայեացքով դէս ու դէն էր նայում. դա մեռնողի հայեացք էր, որ կարծես տեսնում էր «այն կեանքում» եղածը. մի բան, որ մեզ՝ առողջներիս երբէք չէ յաջողւում։

Խեղճ մատաղահաս կնոջը լաւ բննելուց յետոյ եկայ այն եզրակացութեան, որ հիւանդութիւնը զանց էին արել և դրութիւնն անյուսալի էր. սիրտը կամաց-կամաց դադարում էր գործելուց։

—Մարթա՛, ասացի ետ քաշելով, բանը վատ է.

—Այո՛, ես էլ եմ տեսնում, որ վատ է. հառաչելով հաստատեց Մարթան. ջրով լցել է. էլ ճար չկայ։

—Հիւանդութիւնը հնացրել են. առաջ պէտք էր բժշկել. կառողջանար, մեղք է. ջահիլ կին է։

—Ի հարկէ, 21 տարեկան հազիւ կայ. 3 տարի է, ինչ պսակւել է։ Ո՞վ էլ պիտի հոգար. ինչպէս տեսար, մարդն անգործ է, սկեսուրն էլ ցաւողը չէ. խեղճ աղջիկս ցաւը թագցրել է, մինչև որ այլ ևս անկարող է եղել. ի՞նչ արած. այդ էլ իմ դժբախտութիւնիցն է։

—Դու այրի՞ ես, չէ՞։

—Այո, այրի եմ. մարդս խօլերայի ժամանակ մեռաւ. առաջ մենք լաւ էինք ապրում։ Մեր կողքի տունը տեսա՞ր. դա իմ տէրտրն է—մարդիս եղբօրը. մենք միասին էինք ապրում. լաւ կարողութիւն ունի. այժմ էլ դեռ անցեալ տարուանից 12 դեզ չկալուած ցորեն ունի։

Հապա ինչո՞ւ հիմայ էլ նրա հետ չես։

—Ինչո՞ւ, հէգնօրէն հարցրեց Մարթան. քէֆը չուզեց, մի կտոր հացն աչքին երևաց, հարստանալ է ուզում. ինձ համար էլ այս դերեզմանման փոսը փորեցին ու այստեղ գցեցին. ապրիր ինչպէս կուզես. ասացին. դէ՛, ես էլ ապրում եմ. իսկ նա, տեսնում ես, ինչ տներ է շինել. կատարեալ աղայ է, ինչպէս երևում է որբի արտասուքը լաւ մարսեց։ Ես էլ այդտեղ քիչ չեմ աշխատել. հանգուցեալ ամուսնուս օրով մեզ համար ոչինչ չէինք ծախսում. ամեն բան տուն էինք բերում. նրանց համար որքա՞ն կտաւ եմ գործել. բայց որ իմանաս ինչպէս դուրս գցեցին. մի թել անգամ չտուին...

—Այդ ի՞նչպէս կարող է լինել. ինչո՞ւ չգանդատուեցիր։

—Փորձեցի, սիրելիս, ամեն բան փորձեցի. դատարան էլ գնացի. բայց որբին իրաւունքը ո՞վ է տալ. մեր ծերերը վաղուց են մոռացել այդ բանը։ Ինձ էլ մի լաւ հայհոյեցին. «անպիտան պառաւ, ի՞նչ ես շառեր հնարում» ասացին, «քեզ համար գերեզման են փորել, գնա, պարկիր մէջը. շատ անես, հողից էլ կզրկենք»։ Իսկ տէրտրս աւելի բարկացաւ և հրամայեց իր բակն այլ ևս չմտնել. այն չափարը տեսա՞ր. այդ էլ նրա համար քաշեց, որ հոտս անգամ չառնի. տեսնում ես. կարծես իմ հոտն այդքան ՁՆասակար է։ Ես էլ նրա կողքովն անգամ չեմ անցնում. ներս եմ սողում ու թաղւում ինձ համար քանդած փոսում. այ իմ բաները...

—Հապա ինչպէ՞ս ես կերակրւում.

—Օրավարձով. փառք Աստուծոյ, դեռ առողջ եմ. մի տեղ լւացք, մի այլ տեղ հունձ եմ անում, մի երրորդ տեղ երեխայ եմ պահում և քաղցած չեմ մնում... Աղջիկս մէջքս կոտրեց, եթէ ոչ, ի՞նչ կար որ։ Մարդու տուի, մտածելով թէ՝ գոնէ նա լաւ կապրի—տաք կհագնի, կուշտ կուտի. հակառակը դուրս եկաւ. հիմա նրանից հեռանալ չի լինիլ, երեխան էլ մի կողմից է ձեռք ու ոտքս կապել... շատ դժւար է... Նա պատժում

էր շատ պարզ և միանգամայն հանգիստ կերպով. այդ պատճառաւ էլ խոր տպաւորութիւն թողեց վրաս. «քիչ խօսքեր, բայց ցաւի գետ, անյատակ գետ»։

Լապտերի աղօտ լոյսը մերթ բարձրանում, մերթ իջնում էր, կարծես խեղդուելու լինէր այդ ծանր օդում, ուր երեք արարածներ գոյութեան սոսկալի կռիւ էին մղում։ Տարօրինակ կլինէր մտածել, որ այդտեղից դուրս գոյութիւն ունէին և՛ երջանկութիւն, և՛ գեղեցկութիւն, և՛ ծաղիկների բոյր, և՛ նւագարաններ, և՛ խինդ ու ծիծաղ...

—Ի՞նչ արած, Մարթա՛, ասացի ես գեղարկղից մի քանի փաթեթներ հանելով, լաւ է թէ վատ, բայց բժշկել պէտք է. ահա քեզ դեղ, այս էլ թէյ, շաքար և սպիտակ հաց. ուտացրու հիւանդիդ. նրան թեթև կերակուր է հարկաւոր զուցէ և առողջանայ...

Ես նայեցի Մարթային. նրա պարզ ու սիրալիր դէմքը յանկարծ տարօրինակ կերպով փոխուեց ու մթնեց։

—Դեղի համար խորին շնորհակալութիւն, իսկ սպիտակ հացը պահեցէք. ասաց նա իրեն զսպելով. մեզնից աւելի աղքատի կտաք. մենք, փառք Աստուծոյ, մի կտոր հաց ունենք։

—Այդ ի՞նչ է նշանակում, ուրեմն իմ հացից զզո՞ւմ ես. ասացի ես՝ աշխատելով անյարմար կացութիւնս ծիծաղով ծածկել։

—Ինչո՞ւ ես զզուում. սուրբ հացից չեն զզուում. այլ հէնց այնպէս. վերցնելու հարկ չկայ. մեզնից աղքատները կան։ Դա մեզ պէտք էլ չէ, մենք սև

հացով ենք մեծացել, սպիտակին սովորելն աւելորդ է։

Ես հաղիւ կարողացայ համոզել, որ հիւանդի համար ընդունի առաջարկածներս, այն էլ այն պայմանով, որ ժամանակին մի կերպ վարձահատոյց լինի։

Մենք իրարից բաժանուեցինք իրրև բարեկամներ. և երբ այդ փոսից լոյս աշխարհ դուրս եկայ, ինձ այնպէս թւաց, թէ մի շատ գեղեցիկ ու թանկագին բան եմ գտել։ Եւ, յիրաւի, աշխարհումս ի՞նչ կայ, որ լաւ մարդուց աւելի լաւ, աւելի գեղեցիկ լինի։

Այդ օրից մօտ երկու շաբաթ անցաւ. և այդքան ժամանակամիջոցում գլուխս այնքան էր խառնուած, որ ամենևին չկարողացայ Մարթային տեսութեան գնալ։ Բայց ահա մի օր, երեկոյեան դէմ ծառաս յայտնեց, որ ինձ մի ինչ որ պառաւ է հարցնում։

—Կանչիր այստեղ։

—Չէ գալիս, ասում է տրեխներով եմ։

—Ուժով բեր.

Ծառաս գոհ սրտով դուրս թռաւ հրամանս կատարելու և մի քանի րոպէից յետոյ բրթելով ներս բերեց մի պառաւ, որ փաթաթուած էր մի հին ու կարճլիկ քուրքում, իսկ գլխին չալմայի ձևով փաթաթել էր մի սև թաշկինակ։ Քուրքը կրծքի ու փորի վրայ ուռած էր։ Ես լաւ նայեցի. անպէտք չալմայի տակից ինձ նայեցին ծանօթ, պարզ աչքեր, որոնք դեռ ապրել ու կռուել էին ուզում։

—Օ՜, Մարթա, որին ամենքը ճանաչում են, ուրախ-ուրախ բացականչեցի ես. այդ դու՞ ես, չէի սպասում։

—Այո՛, ես եմ, պատասխանեց Մարթան կնատակից ինչ որ կապոց հանելով. այ, քեզ համար թարմ ձուեր եմ ընծայ բերել. կեր, քեզ անուշ լինի, քաղցրիկս։

—Տես, ինչ ես արել, մի՞թէ առանց ընծայի չէր լինիլ.

—Ոչ մի կերպ. դու ինձ մօտ ընծայով էիր եկել, նոյնը ես եմ արել, շնորհ արա՛ վերցրու։

Ճար չկար, պէտք էր վերցնել։

—Իսկ աղջիկս մեռաւ, ասաց հառաչելով Մարթան. քեզնից յետոյ երկու օր հազիւ ապրեց. աղատուեց. ուղիղն ասած՝ լաւ եղաւ, մեղք էր. փառք քեզ Աստուած, որ աղատեցիր խեղճին, ասաց նա խաչակնքելով։

—Իսկ թոռնիկդ։

—Ինձ մօտ է, ասաց Մարթան, ցոյց տալով նրան. այ, այստեղ է։

—Բայց ինչո՞ւ, իսկ հա՞յրը...

Է՜... հայրը... նա այս տօներից յետոյ շուտով կամուսնանայ. նոյն իսկ հարսնացուն ընտրել է, էլ երեխանները ինչի՞ն է պէտք. էլի տըղայ լինեը, ուրիշ բան է. ասում են—մեր բակումն առանց դրան էլ աղջկերք շատ կան։ Գցել են տատի վրայ։ Պառաւ օրիս կը մեծացնեմ։

—Բայց դու մենակ չես կարող պահել։

—Մի կերպ պահում եմ. հարևաններից կաթն եմ ճարում, հացը ծամում, բերանն եմ դը-

նում—մի կերպ մեծանում է։ Մի տես, ինչ բարի էլ երեխայ է. շատ ուժեղ ու գեղեցիկն է...

Եւ քուրքը ետ քաշելով, նա ցոյց տուաւ մի կլորիկ փաթաթան, որից դուրս նայեց մի գունատ դէմք, կապոյտ, չքնաղ աչքերով։ Այդ աչքերում վաղաժամ վիշտ կար. անմեղ երեխան կարծես զգում էր, որ ինքը ոչ ոքի պէտք չէ, որ այս աշխարհում ապրելու համար իրեն ևս ահեղ կռիւ է սպասում։

Ես ու Մարթան ինքնաեռը շրջապատեցինք և մինչև կէս գիշեր նստեցինք. նա գիշերեց ինձ մօտ, իսկ առաւօտեան վաղ թոռնիկի հետ կրկին գնաց դէպի իր փոսը։

Հէնց ձիւնն սկսեց գալ թէ չէ, երևաց նաև անբերրիութեան անխուսափելի ուղեկիցը-անյագ տիֆը։ Գիւղերի ճանապարհներում նորից լսեց սայլակների զանգակների ձայնը. նորից աջ ու ձախ թռան փոստային կառքեր, որոնք տանում էին բժիշկներ, կարմիր խաչի լիազօրներ, ստատիստիկներ, ասոիճանաւորներ ու այլ գործիչներ։ Սրանք կուում էին ժողովրդական թշուառութեան դէմ. և այս կռիւը նման էր այն կռիւին, որ առասպելական հերոսները մղում էին հարիւրգլխեան վիշապի դէմ։ Կարում ես մի գլուխը, տեսար նորը բուսնեց. վերջացնում ես նաև սրան, տեսար արիւնռուշտ բերանով հանդէս եկաւ երրորդը։ Համաճարակը յայտնուեց նաև Մատրեոնկայում։ Երբ ես այդ գիւղը գնացի, քսան ընտանիքում նա արդէն իր գործը տեսնում էր. նա չէր խնայում ոչ հարուստ, ոչ աղքատ, ոչ ծեր, ոչ երիտա-

սարդ։ Մի քանի տեղ ամբողջ ընտանիքով պարկած էին. այնպէս որ խնամող ու խմելու ջուր տուող չկար։ Իմ այցելած վերջին տունը Մարթայի տէ-գորն էր։ Զարմանքս մեծ եղաւ, երբ ներս մըտ-նելով, այդտեղ տեսայ Մարթային, որ Թոռնիկը գրկած, նստել էր պատուհանի մօտ։

—Դու այստե՞ղ, հարցրի ես։

—Ի՞նչ կայ որ, պատասխանեց Մարթան, մի տես, տունը կատարեալ հիւանդանոց է դար-ձել. նայող չկայ. վառարանն առանց վառելու, կովն առանց կթելու են մնացել. այսպէս ի՞նչպէս թողել։

—Իսկ չափա՞րը, ի՞նչպէս, քանդեցի՞ք։

Նա հասկացաւ ակնարկս ու թեթև ժպտաց.

—Ինչո՞ւ քանդել, մնում է. անհոգ կաց—կը-ճուճը որքան էլ գլորւի, տեղը դարձեալ թոնիրն է. ճիշտ իմ բանն է։

Այդ ժամանակ վառարանի գլխին լսւեց մի խաղաղ ու ձգւող հաղ։

«Վա՛յ, այրւում է, այրւում է ներսս»...«Մար-թան թոռնիկին նստեցրեց, ինքը փարչը ջրով լցրեց ու զգուշութեամբ վերև բարձրացաւ։

Ա՛ռ, խմի՛ր, հոգիս, կհովանաս. դորովով ա-սաց Մարթան. բեր ես էլ գլուխդ բռնեմ, տես-նում ես, ոյժ չկայ մէջդ. ա՛խ, ջանս դուրս գայ. մրմնջում էր նա, կարծես առջևը երեխայ լինէր պարկած։

Վառարանի վրայից խճճւած մազերով ու մօրուքաւոր մէկը նայեց. աչքերը պղտոր էին ու ոչինչ չէին տեսնում։ Նա չորս կողմը նայեց ու

նորից ընկաւ։ Մարթան խնամքով նրա բարձն ուղղեց ու ցած իջաւ։

—Տեսնո՞ւմ ես ի՞նչ օրուն է. ինքն իրեն չէ հասկանում, ի՞նչպէս կարելի է այդպէս թողնել։

Մարթան այնքան մնաց տէգոր տանը, մինչև որ նա բոլորովին առողջացաւ։ Այնուհետև կըր-կին վերադարձաւ իր փոսը. «ժեղ մօտ մնա» ա-սող չեղաւ։ Իսկ տէգրն իբր շնորհակալութիւն նրա հոգատարութեան համար Մարթային ընծայեց մի փութ ալիւր և իր հին կօշիկները, ո-րոնք խեղճի ոտերին չեկան։

Ես շուտ-շուտ էի գնում Մատրեոնկա. և երբեմն այնտեղ, երբեմն այստեղ հանդիպում էի Մարթային։ Նա Թոռնիկը գրկած, բարի ժպիտը երեսին խրճթից խրճիթ էր անցնում. այդ ծանր ձմեռը նա քիչ կեանքեր չազատեց մահից։ Թոռ-նիկը-Մաշան, ոչ թէ օրերով, այլ ժամերով էր մեծանում։ Եւ Մարթայի հետ որքան ենք ուրա-խացել, երբ անմեղ մանկիկը մի անկիւնում նըս-տած, անհասկանալի կլտալլտոցով խաղում էր։

Գարնանը համաճարակը դադարեց. ես այլ ևս Մատրեոնկա չէի գնում. բայց Մարթան եր-բեմն այցելում էր ինձ և ամեն անգամ մի որևէ ընծայ էր բերում—թրթընջուկ, սունկ, պտուղներ։ Մէկ էլ յանկարծ սկսեց այլ ևս չերևալ. իսկ ես հարց ու փորձի ժամանակ չունեցայ։ Ա՜խ, այդ սոսկալի «ժամանակ չունեցա»-ն։ Ինչպէ՞ս է չորա-ցնում ու մեռնում մարդկային հոգին և որքան ազնիւ ձգտումներ է թաղում առօրեայ հոգսերի դէզի տակ։ Այսօր ժամանակ չկայ, վաղը ժամա-նակ չկայ. իսկ այնտեղ, մէկ էլ տեսար, մի կեանք

թաւարեց. կատաղութիւնից մազերդ ես փետում. ուզում ես երէկը վերադարձնել, սակայն ուր...

Մի անգամ—սեպտեմբերի սկզբներին ինձ մօտ բժշկելու էր եկել Մատրեոնկայի գիւղացիներից մէկը. ես նրանից ուզեցի իմանալ թէ՝ արդեօք չէ՞ ճանաչում Մարթա Պատանչիկովային։

—Մարթային, ասաց նա, մի՞թէ կարելի է նը-բան չճանաչել. մեզնում նրան ամենքը ճանաչում են. նա «անիծեալ»-ի ժամանակ իմ կնոջն էլ էխնամել։

«Անիծեալ» գիւղացիք տիֆին էին ասում։

—Ա՛յ այ, հէնց դրան եմ ասում. ասա, խնդրեմ, ի՞նչպէս է, կենդանի՞ է, հարցրի ես.

Գիւղացին սկսեց լեզուն ծամծմել ու ծոծ-րակը քորել.

—Կենդանի է, բայց մի անհամ բան պատա-հեց. այժմ այստեղ, քաղաքում, բանտարկւած է։

—Ի՞նչ ես ասում, չէ կարող լինել. բայց ինչո՞ւ համար, այն էլ այդ պատւական կինը...

—Կինը, այո, ոսկի կին է, խօսք չունեմ. բայց ի՞նչ կանես, փորձանք էր, պատահեց. այն էլ քրէական... իր տէգոր փակած ամբարից ա-լիւր է գողացել...

—Շա՞տ.

—Ո՜չ, ի՞նչ շատ. կերևի միայն մի բուռը. գլխաւորը կոտրելն է. եթէ այդպէս չլինէր... բայց կոտրել...

Գիւղացին առանձին բաւականութեամբ էր արտասանում այդ քրէական «կոտրել» բառը. երևում էր՝ այդ բառն իր ազդու շեշտով նրան շատ էր դիւր գալիս։

—Ինչպէս երևում է այդ տէգրը շատ լիրբն

է, բարկացած ասացի ես. մի բուռն ալիւրի հա-մար մարդուն բանտ գցել...

Ակամայ յիշեցի վառարանի վրայի գուլպը և Մարթայի մրմունջն այդ գլխի վրայ.

—Ի՞նչ խօսք, որ կոպիտ է վարւել. համա-ձայնեց գիւղացին. վիրաւորել, շատ է վիրաւորել Մարթային. շատ խստասիրտ, հարստահարող մարդ է. մենք, որ օտար ենք, դարձեալ ցաւում ենք։

—Ա՜խ, դո՛ւք. դուք ինչ պատուղներ էք. դուք էլ պակասը չէք։ Նա խեղճ կնոջը կողոպտել, տա-նից դուրս է արել. իսկ դուք, զոնէ մի բան ա-սէիք. ձեր հոգուն մեղք չէ՞։

—Տէր Աստուած, շփոթւած ասաց գիւղա-ցին. բայց եթէ մեր ձեռքից մի բան գար. մեզ-նում գիտէ՞ք ինչպէս է. ում գրպանը տոուզ է, իրաւունքն էլ նրանն է. հապա չենք ցաւում, բայց ի՞նչ կարող ենք անել. իրաւունքն այժմ ունևորինն է։

Ես այլ ևս չհակաճառեցի. և ի՞նչ էլ ասէի. չէ՞ որ նա իրաւունք ունէր. ոչ միայն գիւղում, այլ և ամեն տեղ «իրաւունքն այժմ ունևորինն է»։

—Նա մի թոռնիկ էլ ունէր, չգիտեմ՞ նա ինչ եղաւ. հարցրի ես.

—Թոռը... այդ արդէն չեմ կարող ասել. ո՞վ գիտէ ինչ եղաւ։ Ես սաստիկ վրդովւեցի և ըն-դունելութիւնը վերջացնելուց յետոյ անմիջապէս քաղաք գնացի Մարթայի վիճակի հետ ծանօթա-նալու, ճիշտ այնպէս էր, ինչպէս գիւղացին պատ-մեց. Մարթան մեղադրւում էր փակը կոտրելու և ալիւրը գողանալու համար. դրա համար էլ հրս-կողութեան տակ էր առնւել. իսկ գործը պիտի

քննուէր նահանգական դատարանի նիստում երկու շաբաթից ոչ ուշ։ Թոռնիկի մասին այստեղ էլ ոչինչ չիմացայ։ Ես տուն վերադարձայ, ծանօթներիցս մէկին խնդրելով, որ գործի քննութեան օրն ինձ իմացնէ։ Նշանակած օրը ես ժողովարանումն էի. նահանգական դատարանի նիստերը սովորաբար այդտեղ էին լինում. նեղ նախասենեակում սպասում էի դահլիճի դռների բացուելուն. ինձ շարունակ դէս ու դէն էին հրելում։ Տրամադրութիւնս վատ էր և ամէն աննշան բան ինձ գրգռում էր.—և՛ այս ճանձրոյթից անմատացած ամբոխը, որ եկել էր ուրիշի խայտառակութիւնով, ուրիշի տանջանքով զուարճանալու, և՛ ժողովարանի մռայլ, կեղտոտ պատկերը, որ գիւղացիք բերել էին իրենց ուսերով, և՛ այս խոնթ սեպտեմբերեան օրը, որ երբեմն առանց պատճառի արտասուք էր թափում, երբեմն էլ այդ արտասուքի միջից ժպտում՝ արևի ճառագայթներ արձակելով։ Ես մի կողմ քաշուած, բարկացած էի. իսկ շուրջս կատակում ու ծիծաղում էին իրար ողջունելով ու գաւառական նորութիւններ հաղորդելով. օրինակ. թէ ինչպէս է երէկ Իվան Իվանիչը Թուղթ խաղալիս լաւ տանուլ տուել, կամ ոմն Մարիա Պետրովնա իր աղախնի հետ ծեծկուել։

—Երևակայեցէք. ասաց մօտս կանգնածներից մէկը, այստեղ ոչ մի հետաքրքիր գործ չկայ, բոլորը գողութիւն, կռիւ, վիրաւորանք և ոչ մի սպանութիւն։

Նա, որ «երևակայելու» էր հրաւիրում, պատասխանել չկարողացայ, սրովհետև աստիճան-

ների առջևի դրան մօտ ինչ որ շարժում առաջացաւ և ամբոխը դէպի այդ կողմը շարժուեց։ Աստիճանների վրայ երկու սուիններ փայլեցին և ես երկու զինուոր տեսայ, որոնք հրելով մի պառաւ էին բերում. նա բանտարկեալի հագուստով էր և գլխին թաշկինակ էր կապել, որ իջնում էր մինչև ճակատը։ Ահագին, լայն չաքմաներն անյարմար կերպով քաշ տալով և աստիճանների վրայ շարունակ սայթաքելով, պառաւը գլուխը բարձրացրեց և ես մէկէն ճանաչեցի այդ աչքերը, որոնք չնայելով այդքան ձախորդութիւններին, դարձեալ ապրելու և կուելու ծարաւ էին արտայայտում։

—Մարթա, ձայն տուի ես և աշխատեցի մի կերպ մօտենալ, բայց զինուորն արգելեց.

—Արգելած է, հեղինակաւոր ձայնով ասաց նա, և Մարթայի մէջքին խփեց... «գնա էլի, ինչո՞ւ կանգնեցիր. ճանապարհ տուէք, պարոններ, այդպէս չէ կարելի»։

Մարթան հազիւ կարողացաւ գլուխ տալ. նա կողքի դռներից մէկով դահլիճ մտաւ և այլ ևս չերևաց։ Զը հասկացայ, թէ այդ խեղճ ու համեստ արարածին ինչո՞ւ էին երկու զօրեղ զինուորների ու հրացանների հսկողութեան տակ դրել. կարծես նա մի կատաղի գազան էր, որին ուզում էին հասարակութիւնից բաժանած պահել։

Դահլիճի դռները բացուեցան և հասարակութիւնը ներս խուժեց տեղ բռնելու։

—Դատաստանն է գալիս, հաստ ձայնով ասաց պրիստաւը. այդ ձայնը կարծես տակառից էր գալիս։ Դահլիճը թեթև շշնջաց և իսկոյն ամէն ինչ լռեց։

Սովորական ձևականութիւններից յետոյ, նախագահը, որ մի կարճահասակ, համեստ դէմքով ու յոգնած աչքերով մի ծերունի էր, դատապարտուածին դարձաւ խմանալու թէ՝ արդեօք նա իրեն մեղաւոր չէ՞ ճանաչում։

Մարթան վեր կացաւ և խոր գլուխ տալով ասաց—մեղաւոր եմ, պարոն դատաւոր. սատանան խաբեց, մեղաւոր եմ։

—Պատմեցէք իրողութիւնը։

—Ահա, թէ ինչպէս եղաւ, հոգիս. հանդուցեալ աղջկանից մի թոռնիկ մնաց, ղէ, փոքր երեխայ էր, ուտել էր ուզում. ոչ ինձ համար ուտելու բան կար, ոչ նրա. ես դեռ կարող էի մի կերպ համբերել, ինձ ինչ կայ. քաղցած մնալն ինձ համար նոր բան չէր. իսկ երեխան... նա ինչ է հասկանում, շարունակ լաց էր լինում— «հաց եմ ուզում, հաց եմ ուզում»։ Ես էլ վերցրի ու... ալիւր... «երեխի համար գոնէ բլիթներ կը թխեմ», ասացի։ Այ թէ ինչպէս եղաւ, պարոն դատաւոր։ Խոստովանւում եմ, մեղաւոր եմ, ներեցէք ինձ մեղաւորիս։

Մարթան նորից խոր գլուխ տուաւ։

—Ինքնագլուխ վերցնելուց առաջ ինչու չը խնդրեցիր.

—Խնդրեցի, հայրս, հապա չխնդրեցի. քանի՞ անգամ եմ մօտը գնացել. իրեն հարցրէք։ Բայց գիտէք նա ինչ ասաց. «Ես թագաւոր չեմ, ասաց, որ քեզ էլ, թոռանդ էլ կերակրեմ. ուր կուզես գնա, քեզ համար հօ չեմ ամբարել»։ Իսկ ուր գնայի, պ. հաշտարար. նա դեռ բանի՞ չկալսուած դէղեր ունի. իսկ ուրիշները, որոնք ուրախութեամբ կտային, խրճիթներում մի փշրանք գոնէ չունէին։ Թոռս էլ շարունակ «հաց, հաց» էր գոռում։

Սկսեց վկաների հարց ու փորձը. ամենքը միաձայն վկայեցին, որ Մարթան լաւ կին, ոսկի պառաւ է եղել. որ նա տնից տուն ման գալ և հէնց այնպէս հաց հաւաքել չէր սիրում. այլ աշխատում էր մի կերպ վերադարձնել։ Բայց վերջին տարին նրա համար շատ ծանր էր. որովհետև բերք չկար, ամեն տեղ սով էր. այնպէս որ նոյն իսկ մի կտոր հաց խնդրելու հնար չկար։ Այստեղ մի հետաքրքիր հանգամանք էլ պարզուեց.—բանից դուրս եկաւ, որ Մարթան այդ չարաբաստիկ «բուռն» ալիւրի համար, որ նրա ձեռքից կրկին խլել էին, իր տէգոր տանը բան էր արել։ Նոյն իսկ վերջինս, որ պատկառելի մօրուքով մի լիքը գիւղացի էր, չուրացաւ այդ։

Որքան գործը վերջին էր մօտենում, այնքան էլ հասարակութեան տրամադրութիւնը փոխւում էր. անտարբեր դէմքեր այլ ևս չկային. կարծես մի խաղաղ լոյս մտաւ այս խաւար դահլիճը և լուսաւորեց և այս նշանաւոր կրող դատաւորներին, և բազկաթոռների վրայ նստած 12 երդուեալներին, և նոյն իսկ գոնների մօտ կանգնած կեղտակոլոլ ոստիկանին։ Իսկ դատապարտուածի շորեր հագած Մարթան 2 սուլիների հովանու տակ գլխակոր նստած սպասում էր՝ թէ ինչ վճիռ կտան։

—Մեղադրեալ, նորից դարձաւ նախագահը, խօսքը ձերն է, նոր ոչինչ չունէք ասելու։

Մարթան վեր կացաւ.

—Պարոնայք հաշտարար ծերունիներ և

դուք, խղճուկ դատաւորներ, սկսեց նա դողդոջ ձայնով, ահա ես, ձեր տրամադրութեան տակ եմ. արդար դատեցէք, Թոռնիկին խնայեցէք, Աստուած կվարձատրէ...

Նա նստեց. հասարակութիւնից մէկը քիչ էր մնում փրութկար «խղճուկ դատաւորների» վրայ, սակայն զանազան բերաններից լսւող ըշ՜շ՜ սպառնագին ձայնը խլացրեց այդ ծիծաղը և շատ աչքերում արտասուք երևաց. «վարդարացնեն», զսպած կերպով շշնջացին ոմանք։

Խորհրդակցութիւնը երկարեց. այդ հանգամանքն սկսեց զարմանք և անհանգստութիւն պատճառել. մարդկանց լսւած համբերութիւնն սպառւում էր. կերևի Մարթան էր միայն հանգիստ, և այդ բոպէին անշուշտ մտածում էր ոչ թէ իրեն, այլ Թոռնիկի մասին։ Բաւական ժամանակ անցնելուց յետոյ միայն իմացուեց, որ վճիռն այդքան ուշացնողը եղել էր մի առևտրական, որ չէ ուզեցել արդարացնել ասելով. «մի բուռը, մի բուռը... ինձնից՞ մի բուռն այսօր կը տանեն, մի բուռը վաղը և վերջ ի վերջոյ ինձ ոչինչ չի մնալ»։ Սակայն խիղճը յաղթեց և երդուեալների գլխաւորը հանդիսաւոր կերպով յայտարարեց—«անմեղ է»։

Հասարակութեան մէջ 5 ու 10 կոպէկանոցներն սկսեցին զնգզնգալ. Մարթայի հատար փող էին ժողովում։ Իսկ նա հանդիստ կերպով սկսեց խաչակնքել ու փառք տալ Աստծուն։

«Ազգային գրադարան»
NL0311402

10.985